ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ ԵՎ ՍՈՎԵՏԱՀԱՅ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Վերջերս իր աշխատանքներն ավարտեց ՍՄԿԿ XIX կոնֆերանսը, որը հանգամանորեն քննարկելով մեր երկրում օրավուր ծավալվող բարեփոխումների հետ կապված հարցերը, ընդունեց համապատասխան բանաձևեր, որոնցում նախատեսվում է խորացնել ու անշրջելի դարձնել հեղափոխական վերակառուցումը։ Կոնֆերանսում քննարկվեցին տնտեսական, քաղաքական ու գաղափարական բազմաթիվ հարցեր։ Ի՞նչ անելիքներ ունեն մեր պատմաբանները։ Ստորև տպագրում ենք մի խումբ հայ պատմաբանների մտորումները, կարծիքները և առաջարկները։

Մ. Գ. ՆԵՐՍԻՍՅԱՆ (ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս): *Մեր երկրում տեղի ունեցող վերակառուցումը պահանջում է վերակառուցում նաև պատմագիտության բնագավառում։ Մասնավորեցնելով խոսքը սովետահայ պատմաբանների վերաբերյալ, պետք է նշել, որ նրանց առաջ ևս գրվում են բազմաթիվ կարևոր խնդիրներ, այդ թվում՝ վերանայել ոչ հեռավոր անցյալում, հատկապես ստալինյան դաժան ռեժիմի տարիներին հորինված հակագիտական, դոգմատիկ տեսակետներն ու դրույթները, լուսաբանել հայ ժողովրդի պատմության կեղծված ու մոռացության մատնված էջերը և այլն։ Հարցերը, անելիքները, իսկապես շատ են, բայց ես կցանկանայի այստեղ կանգ առնել դրանցից մի քանիսի վրա։*

Անհրաժեշտ է լրջորեն զբաղվել թուրք-օսմանյան բռնապետության դեմ XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբներին ծավալված հայ ազգային-ազատագրական շարժման պատմությամբ։ Հայտնի է, որ այդ պրոբլեմի մասին գրված շատ գրքերում ու հոդվածներում զարգացված են հակապատմական, հակագիտական տեսակետներ։ Վուլգար սոցիոլոգիական դոգմաներով սնված հեղինակները, որ ամեն տեղ փնտրում էին նացիոնալիզմ ու հակամարքսիզմ, աշխատեցին աղավաղել ու սևացնել նաև հայ ազատագրական պայքարի պատմությունը։ Ոտնահարելով փաստերը և տարրական տրամաբանությունը, նրանք Զեյթունի, Սասունի, Վասպուրականի և Արևմտյան Հայաստանի մյուս գավառների հայ գյուղացիության XIX դարի երկրորդ կեսի ինքնապաշտպանական կռիվները և զինված ելույթները, օրինակ, որակեցին որպես բուրժուա-նացիոնալիստական և ավանտյուրիստական։ Եվ այս արտառոց «տեսակետները» երկար ժամանակ մատուցվել են մեր ընթերցողներին։ Մեր խնդիրն է այսօր ցույց տալ, որ հակառակ այդ սնանկ, շինծու պընդումների. հակաօսմանյան հայ ազատագրական շարժումը իրականում եղել է խորապես ժողովրդական-դեմոկրատական ու արդարացի, շարժում, որին գլխավորել է հայ տարաստիճան առաջավոր և դեմոկրատական մտավորականությունը։ Մեր պարտքն է ամենայն բարեխղճությամբ շարադրել հերոսական դրվագներով և հայրենասիրական խիզախ ընդվզումներով հարուստ հայ ազգային-ազատագրական այդ պայքարը։

Միաժամանակ հարկ է վերանայել այն գնահատականները, որ տրվել են XIX դարի երկրորդ կեսին գործող հայ ազգային քաղաքական կազմակերպություններին ու կուսակցություններին։ Խոսքը վերաբերում է մասնավորապես արմենականներին, հնչակյաններին ու դաշնակցականներին, որոնք զգալի դեր են կատարել թուրքական տիրապետության դեմ ուղղված հայ ազգային-ազատագրական շարժման կազմակերպման ու ղեկավարության ուղղությամբ։ Երկար տարիներ մեր գաղափարական ճակատում իշխել են հայ ստալինականների պաշտոնական դարձած այն տեսակետները, թե հիշված կուսակցությունները կապված չեն եղել ժողովրդական մասսաների հետ, գործել են նրանցից անկախ, մեկուսացված ու հետադեմ դիրքերից։ Հակապատմական

այս թեզից դժբախտաբար չեն հրաժարվել նաև մեր օրերի որոշ հեղինակներ, որոնք խոսելով, օրինակ, 1880—1890-ական թթ. հայ ազատագրական շարժման մասին, մոռացության են մատնում այդ կուսակցությունների հասարակական-քաղաքական գործունեությունը և ամեն ինչ հանգեցնում են առանձին հայդուկների պայքարին։ Պատմությունը աղավաղվում է նաև այս դեպքում։ Ժամանակն է, որպեսզի ղեկավարվենք այն գնահատականով, որ տվել է Վ. Ի. Լենինը դաշնակցությանը, նկատի ունենալով նրա սկզբնական շրջանի գործունեությունը։

Անցյալ շրջանում զգալի աշխատանք է կատարվել հայ-ռուսական քաղաքական, տնտեսական ու մշակութային կապերի պատմության ուսումնասիրության գծով։ Հրապարակվել են ոչ քիչ աշխատություններ, փաստաթղթերի ժողովածուներ ու հոդվածներ, որոնցում ցույց են տրված Ռուսաստանի վճռական դերը Արևելյան Հայաստանը պարսկական տիրապետությունից ազատագրելու գործում, ռուսական առաջավոր գրականության ու արվեստի ազդեցությունը հայ մշակույթի զարգացման վրա, ռուսական հեղափոխական հոսանքների ու շարժման նշանակությունը հայ քաղաքական-հեղափոխական կյանքում և այլն։ Սակայն այս բոլորով հանդերձ մեր պատմաբանների մեծ մասը մոռանում, ավելի ճիշտ խուսափում է խոսել ցարական կառավարության գաղութային, մեծապետական շովինիզմի քաղաքականության մասին, հետադեմ մի քաղաքականություն, որը ուղղված էր ռուսական կայսրության մեջ ընդգրկված բոլոր ժողովուրդների դեմ։ Մի՞թե կարելի է մոռանալ այն գնահատականները, որ բազմիցս տվել է Վ. Ի. Լենինը Ռոմանովների կառավարությանը։ Հայտնի է, օրինակ, որ ցարական միապետությունը XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին խիստ ռեակցիոն դիրք գրավեց թուրքական բռնակալության դեմ ուղղված հայ ազատագրական շարժման նկատմամբ և արեց ամեն ինչ, որպեսզի խափանվի հայ ժողովրդի մշակույթի զարգացումը։ Ինչո՞ւ շրջանցել այս և նման փաստերը։

Այսօր սովետահայ պատմագիտության առաջնակարգ խնդիրն է անկողմնակալ դիրքերից ուսումնասիրել և նորից շարադրել Սովետական Հայաստանի պատմությունը, մասնավորապես 1929—1953 թթ. ժամանակաշրջանը, քանի որ վերջինիս նվիրված շատ աշխատություններում աղավաղվել են փաստերն ու իրականությունը։ Դրանցում չի խոսվում, օրինակ, այն ոճրագործությունների, անօրինակ կամայականությունների ու բարբարոսությունների մասին, որոնք կիրառվեցին Հայաստանում Ստալինի և նրա կամակատար Բերիայի ցուցումներով գյուղացիության, բանվորների, մտավորականության, պետական ու կուսակցական ակտիվ գործիչների, սփյուռքից հայրենիք ներգաղթած հայերի և հասարակության մյուս շերտերի նկատմամբ։ Պետք է ստեղծվի մեր երկրի իսկական պատմությունը, հենված միայն փաստերի ու ճշմարտության վրա։

Մենք արդեն թևակոխել ենք վերակառուցման չորրորդ տարին, բայց պատմաբանները դեռևս լուրջ քայլեր չեն կատարել սովետական հասարակության ճշմարիտ պատմությունը ստեղծելու ուղղությամբ։ Ի դեպ, ինձ թվում է, որ կենտրոնական մամուլում տպագրված մի շարք հոդվածներում ըստ հարկին չի գնահատվում այն կարևոր դերը, որ խաղաց Ն. Ս. Խրուշչովը ստալինիզմը առաջին անգամ մերկացնելու, մեր երկրում զգալի բարեփոխություններ մտցնելու գործում։

Խոսելով թերությունների մասին չպետք է մոռանալ, որ դեռևս քիչ չեն այն դեպքերը, երբ պատմագիտական ծանրակշիռ ուսումնասիրությունների փոխարեն լույս աշխարհ են բերվում մակերեսային շարադրություններ, որոնցում դժվար է գտնել ո՞չ նոր փաստեր, ո՞չ էլ հիմնավորված տեսակետներ։ Արհամարհելով գիտահետազոտական աշխատանքի լուրջ պահանջները, չունենալով համապատասխան պատրաստություն, որոշ հեղինակներ գիտական ամենաբարդ հարցերը «լուծում են» շատ դյուրությամբ։ Չհասկանալով մասնագիտական խորացման անհրաժեշտությունը, նրանք գրում են բազմատեսակ, հաճախ իրար հետ կապ չունեցող խնդիրների մասին, ակնհայտորեն

հետապնդելով քանակի հանգամանքը, պարզապես զբաղվում են «ծաղկաքաղությամբ»։

Մենք քիչ ենք զբաղվում պատմագրության հարցերով, մինչդեռ պետք է ունենալ ընդհանրացնող ուսումնասիրություններ, որոնցում բացահայտվեն սովետահայ պատմագիտական մտքի զարգացումը, հաջողությունները ու սխալները, նրա հետագա խնդիրները և այլն։ Ճիշտ է, դեռևս 1967 թ. լույս տեսավ Շ. Հարությունյանի «Պատմագիտության զարգացումը Սովետական Հայաստանում. 1920—1963» աշխատությունը, որը սակայն, լինելով անհաջող փորձ, չհասավ իր նպատակին։ Հեղինակը, որ սովետական շրջանի պատմության մասնագետ է, իհարկե, չէր կարող հարկ եղած մակարդակով բարձրացնել և քննության ենթարկել հին, միջնադարյան և XIX դարի պատմության բազմաթիվ ու բազմատեսակ հարցերը, որոնցից նա շատ հեռու է կանգնած։ Գիտահետազոտական լուրջ ուսումնասիրության փոխարեն ստացվել է պարզունակ դատողություններով շաղախված անոտացիաների ժողովածու։ Ավելացնենք, որ գրքում շատ պատմաբաններին տրված «գնահատականները» աչառու են ու կամայական։ Ավելին։ Չկարողանալով հաղթահարել իր սուբյեկտիվիզմը, հեղինակը հաճախ անձնական հաշիվներ է մաքրում։ Միանգամայն պարզ է, որ նման ընդհանրացնող աշխատությունը պետք է գրվի ոչ թե մի մարդու, այլ հեղինակների կոլեկտիվի կողմից, ընդ որում պետք է գրեն լավագույն մասնագետները։ Գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտը արդեն քանի տարի է, ինչ զբաղվում է այս հարցով։ Բայց ե՞րբ է ավարտվելու այդ կարևոր գործը։

Մի հարցի մասին ևս։ Մեր հանրապետության արևելագետները քիչ են զբաղվում իսլամի ու պանթյուրքիզմի հարցերով։ Ինձ թվում է, որ անհրաժեշտ է ստեղծել ուսումնասիրություններ, որոնցում ցույց տրվեն մասնավորապես ժամանակակից պանթյուրքիստների քաղաքականությունը և նրանց գաղափարախոսության խիստ ռեակցիոն, ագրեսիվ էությունը։ Միաժամանակ հատուկ ուսումնասիրության առարկա պետք է դառնա նաև Թուրքիայի ու Ամերիկայի Միացյալ Նահանգների այսօրվա ռազմաքաղաքական սերտ դաշինքը, որը ուղղված է, ինչպես հայտնի է, հիմնականում Սովետական Միության դեմ։

Բ. Ն. ԱՌԱՔԵԼՅԱՆ (ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս)։ Մենք շատ անելիքներ ունենք նաև հին ու միջնադարյան պատմության մի շարք հարցերի գիտական ուսումնասիրության ուղղությամբ։ Խորազնին հետազոտության կարոտ հարցեր են, օրինակ, հայկական հասարակության սոցիալական շերտավորման, դասակարգերի գոյացման, այսպես կոչված «ռազմական դեմոկրատիայի» պետականության, Ուրարտական պետության անկումից հետո բուն հայկական պետականության առաջացման կոնկրետ հանգամանքները, Հայաստանի ստատուսի կոնկրետ դրսևորումները մեդական, իրանական գերիշխանության ներքո VI դարում, այնուհետև 522—331 թվականներն ընդգրկող ժամանակաշրջանում։

Առավել կարևոր են Արտաշեսյանների և վաղ Արշակունիների ժամանակաշրջանում (մ. թ. ա. III—I և մ. թ. ա. I—III դդ.) Հայաստանում ստրկատիրական կամ անտիկ հասարակության գոյության և բնույթի հարցերը, մանավանդ որոշակի միտք է արտահայտված, որով ժխտվում է ստրկատիրական հասարակության գոյությունը Հայաստանում, իսկ անցումը ֆեոդալիզմին տարվում է մինչև մեր թվարկության I—II դդ.։ Վերը նշված հարցերը, ինչպես և ֆեոդալական հասարակության առաջացման օրինաչափությունները և ձևավորման փաստացի ընթացքը Հայաստանում խորը գիտական քննարկում և լուծում են պահանջում։

Պատմաբանների ուշադրությունից վրիպել է հայ եկեղեցու պատմությունը, որը նշանակալից տեղ է գրավում մեր ժողովրդի ոչ միայն հոգևոր, այլև քաղաքական պատմության մեջ։ Այդ վրիպումը պատահական չէ, այլ հետևանք է եկեղեցու նկատմամբ ոչ թե օբյեկտիվ քննադատական, այլ նկատելիորեն ժխտական վերաբերմունքի։ Ժամանակը եկել է վերացնելու այդ ակնհայտ բացթողումը։

Հայ պատմագրությունն անդրադարձել է հայ և աղվանից եկեղեցիների փոխհարաբերությունների, ինչպես և աղվանից գրի ու գրականության հարցերին, որոնք այժմ առանձին իմաստ ու կարևորություն են ստացել և պետք է ավելի խորը քննարկման առարկա հանդիսանան ու չվրիպեն մեր ուշադրությունից։

Հարկ է ասել, որ թեև պատմաբանների ուշադրության կենտրոնում են գտնվել միջնադարյան սոցիալական շարժումների և նրանց գաղափարախոսության հարցերը, այդուհանդերձ քննարկումները կրել են ավելի սոցիոլոգիական, նկատելիորեն կանխակալ և սխեմատիկ, քան վերլուծական բնույթ, լիովին չեն բացահայտվել այդ շարժումների հասարակական-տնտեսական, քաղաքական և մշակութային դերն ու նշանակությունը։

Մեծ կարևորություն են ներկայացնում հայ հասարակական, սոցիալ-տնտեսական և մշակութային-գաղափարական զարգացման հարցերը X—XIII դդ. և դրա հետ կապված այսպես կոչված վերածնության հարցը, որը տարիներ առաջ քննարկման առարկա հանդիսացավ, բայց քիչ թե շատ որոշակի լուծում չստացած մոռացության տրվեց։ Ինչպես առաջներում, նույնպես և այժմ այդ հարցին հակասական մեկնաբանություն է տրվում հայ պատմագրության, փիլիսոփայության և գրականության պատմության մեջ։ Ժամանակը չէ՞, որ այդ խնդիրը դառնա գիտական խոր և վերլուծական քննարկման առարկա և գեթ մասամբ մերձենան դեռևս շարունակվող իրարամերժ հայացքներն ու տեսակետները։

Հայ ժողովրդի հին և միջնադարյան պատմության բազմաթիվ հարցեր հանդիսանում են միտումնավոր խեղաթյուրման և կեղծիքի առարկա թուրքական պատմաբանների կողմից, իսկ մեր պատասխանը դրանց կրում է դիպվածային բնույթ և խիստ թույլ է։ Բացակայում է խոշոր մասնագետների համագործակցությունը հանրապետության թուրքագետների հետ, բացակայում է այդ հարցերին վերաբերող քննական գրականությունը օտար լեզուներով։ Թուրքական պատմագրության բացահայտ միտումնավոր և սխալ մի շարք տեսակետներ իրենց արտահայտությունն են գտնում Ադրբեջանի որոշ հեղինակների մոտ, իսկ մեր պայքարը այս ասպարեզում ևս թույլ է։

Վերը նշված հարցերն ու թերացումները, որ հեռու են լրիվ լինելուց, ցույց են տալիս, որ մենք պատմաբաններս, ունենք շատ անելիքներ։

Գ. Խ. ՍԱՐԳՍՅԱՆ (ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս)։ Վերակառուցումը քայլ առ քայլ ընդգրկում է սովետական հասարակության կյանքի նորանոր բնագավառներ, սրբագրելով անցյալում թույլ տրված բազմաթիվ շեղումներ ու սխալներ և լուծելով տասնամյակների ընթացքում կուտակված ու դեռևս մինչև վերջին տարիները անլուծելի թվացող պրոբլեմներ։ Այն ծավալվում է արդեն թե՛ տնտեսական, թե՛ քաղաքական ու թե՛ գաղափարախոսական ոլորտներում, երբեմն դյուրընթաց, երբեմն էլ հանդիպելով էական խոչընդոտների։ Գաղափարախոսության բնագավառում այդ խոչընդոտները հիմնականում թաքնված են հենց գաղափարախոսական ճակատի աշխատողների գիտակցության մեջ, անցյալ տասնամյակներում, Ստալինի պաշտամունքի ժամանակ առաջացած ու լճացման ժամանակաշրջանում կարծրացած դոգմատիզմը արագորեն թոթափելու անկարողության մեջ։ Ասվածը լիովին վերաբերում է նաև պատմաբաններին։

Իհարկե, «սպիտակ բծերը», ինչպես մենք այժմ ասում ենք, այն է՝ պատմության այս կամ այն երևույթների, պատմական գործիչների նկարագրի նսեմացման կամ, ընդհակառակն, գունազարդման երևույթը, հիմնականում տեղ են գտել նորագույն պատմության՝ սովետական հասարակության պատմության բնագավառում, և դա հասկանալի է, քանի որ նման խեղաթյուրումների հիմնական պատճառը գիտության հետ կապ չունեցող նկատառումներն են, գլխավորապես քաղաքական բնույթի, իսկ վերջիններս ավելի զորեղ են գործում նորագույն շրջանի նկատմամբ ու գնալով թուլանում են պատմության խորքերն անցնելիս։ Սակայն բավականաչափ շատ են այդ բծերը նաև նոր ու միջնադարյան պատմության, ինչպես և հին ու հնագույն պատմության

մեջ, որտեղ դրանց առաջացման պատճառ են դառնում, քաղաքականներից բացի, նաև ուրիշ բնույթի հանգամանքներ, որոնք, սակայն, նույնքան քիչ առնչություն ունեն գիտության հետ (օրինակ, ազգային սնապարծությունը, ոչ լիարժեքության զարգացումը և այլն)։

Պետք է ավելացնել նաև, որ այդօրինակ «բծերի» առաջացումը հին պատմության բնագավառում ոչ քիչ չափով պայմանավորված է եղել հենց նորագույն, սովետական պատմության շարադրման ձևի ազդեցությամբ։ Եթե անպատիժ և «հաջողությամբ» կարելի է խեղաթյուրել երեկվա պատմությունը, ապա ինչո՞ւ, ի սպաս այս կամ այն նկատառումների, չենգափոխել անցյալի պատմությունը։ Ինչո՞ւ, օրինակ, «ի շահ գործի» չհայտարարել պատմական Հայաստանի արևելյան շրջանները Աղվանքի տարածք, այնտեղի հուշարձաններն ու գործիչներին՝ աղվանական հուշարձաններ ու գործիչներ, ու դրանով իբր թե «հարստացնել» այսօր այդ տարածքում ապրող ադրբեջանցի ժողովրդի պատմությունն ու մշակույթը, մի բան, որի կարիքը այդ ժողովուրդը, բուն ժողովուրդը, և ոչ թե նրա անունից հանդես եկողները, ամենևին չունի։

Սակայն սկսելով մեր խոսքը ադրբեջանցի որոշ պատմաբանների հասցեին ուղղված քննադատությամբ, մենք չենք ցանկանում այդպիսով սքողել մեր սեփական մեղքերն ու ցավերը։

Էական նստվածքներ են կուտակվել սովետական պատմագրության մեջ, ես կասեի՝ բոլոր մեր մեծ ու փոքր հանրապետությունների պատմագրությունների մեջ (պատմագրության այդօրինակ հատվածավորման որոշ կողմերն էլ մի առանձին խոսակցության են արժանի) համապատասխան ժողովրդի ծագման ու կազմավորման (էթնոգենեզիսի) պրոբլեմի կապակցությամբ։ Սովորական բան է դարձել պատմության արհեստական «հնացումը» և նույնքան ու ավելի արհեստական ծաղկազարդումը (երբեմն՝ հարևան ժողովուրդների հաշվին, ինչպես տեսանք վերը նշված օրինակի դեպքում)։

Մեզանում դա արտահայտվել է Հայկական լեռնաշխարհի տարածքում մի ժամանակ ծաղկած Ուրարտու պետության գնահատման խնդրում։ Ենունդ առնելով Վանա լճի առափնյա սահմանափակ տարածքում, ուր բնակվում էին ուրարտացի ցեղերը (այստեղ շրջանցում եմ Ուրարտու, Արարատ, Բիայնիլի, Վանի թագավորություն և այլ այդ պետության անվանումների շուրջը ծավալված և գործի բուն էության հետ կապ չունեցող վեճերն ու զրույցները), այդ պետությունը կարճ ժամանակաշրջանում ռազմական ուժի ոգնությամբ տիրեց բազմաթիվ ու դրանց թվում նաև մեծ չափով հայալեզու ցեղերով բնակեցված մի մեծ տարածքի, ստեղծեց իր դպրությունը՝ ուրարտերեն լեզվով, իր նյութական ու հոգևոր մշակույթը, քաղաքական ու մշակութային կապերի մեջ մտավ հարևան երկրների հետ ու երկու դարից ավելի գոյատևելուց հետո մարեց՝ իր տեղը զիջելով Հայաստանին։

Փոխանակ աչքերը հառելու աղբյուրներում դեռևս մ. թ. ա. II հազարամյակում հիշատակված հայկական էթնալեզվական տարրի կազմած բազմաթիվ քաղաքական միավորումների՝ թագավորությունների ու ցեղային միությունների պատմությանը, այդ տարրի տարածական զարգացմանը, որն սկսվել էր Ուրարտու պետությունից առաջ և ընթանում էր նաև նրա ծաղկման ժամանակաշրջանում, մերթ նրա հետ պայքարի և մերթ՝ խաղաղ պայմաններում, և որն ի վերջո հանգեցրեց նրա փլուզմանն ու նրա փլատակների վրա առաջին համահայկական պետության ստեղծմանը, ոմանք աչք են դնում Ուրարտուի ստեղծած պետության ու մշակույթի, նույնիսկ ուրարտերեն լեզվի վրա (որը այլ լեզվախմբի է պատկանում, քան հայոց լեզուն)։ Դրանք, իհարկե, ոչ ասուրական և ուրարտական սեպագրերը կարդացող և ուսումնասիրողներն են, ոչ էլ ուրարտական նյութական մշակույթն իրենց ձեռքերով գետնից հանող ու հետազոտողները։ Դրանք հիշատակվածների հետազոտական արդյունքներից օգտվողներն են, որոնք, օգտվելով հանդերձ, անպարկեշտորեն հայհոյում են մասնագետներին, ի ծիծաղ համայն աշխարհի ուրարտագետների։

Ինչպես ասվեց, այսօրինակ մարմաջը համընդհանուր է, կա գրեթե բոլոր մեր եղբայրական հանրապետություններում և, այլևայլ հանգամանքներից բացի, բացատրվում է նաև վերջին տասնամյակներում այդ հանրապետությունների պատմագրությունների կողմից և մեկուսացած զարգացմամբ։ Այս ցավը ամենուրեք պետք է հաղթահարվի։

Սովետահայ պատմագրության երկրորդ կարևոր խնդիրն է հին Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման հետազոտման պրոբլեմը։ Այն զարգացման մի քանի փուլ է ապրել, նրա ակունքում կանգնած էին Ն. Ադոնցը և Հ. Մանանդյանը, իսկ հետագայում հետազոտությունը շարունակել են Ս. Երեմյանը և ուրիշներ։ Կարճ ասած, եթե առաջին երկուսը և նրանց հարողները հին Հայաստանի սոցիալ-տնտեսական կարգն ի սկզբանե անտի մինչև ուշ միջնադար համարում էին ֆեոդալական, ապա Ս. Երեմյանը բաժանեց այդ ժամանակաշրջանը երկու մասի՝ III—IV դդ. սահմանագծով, համարելով դրանից առաջ ընկած շրջանը ստրկատիրական, իսկ դրանից հետո ընկածը՝ ֆեոդալական ու հայտնաբերելով հին շրջանում որոշ այնպիսի գծեր, որոնք հատուկ էին դասական, անտիկ ստրկատիրական (հունա-հռոմեական) հասարակարգերին։ Այլ հետազոտողներ ջանացել են գտնել այդ հասարակարգի ստրկատիրական բնույթի առանձնահատկությունները, հարակցելով դրանք Հին Արևելքի և հելլենիստական շրջանի հասարակությունների նկարագիրներին։

Այսօր սովետական պատմագրության մեջ նշմարվում է արևելյան հասարակությունները ստրկատիրականների թվին ընդհանրապես չդասելու միտումը, որը հետևանք է մարդկության սոցիալ-տնտեսական զարգացման մեզ համար սովորական դարձած «հնգանդամ» սխեմայի քննադատության, սխեմա, որի անհրաժեշտ անդամներից մեկն է ստրկատիրական հասարակարգը։

Այս քննադատական ուղղությունը, որ նոր չէ, իր առողջ տարրերի կողքին նաև որոշակի վտանգ է պարունակում, այն է՝ խախտել մարդկային հասարակության զարգացման, վերջին հաշվով, միասնական պրոցեսի և միասնական օրինաչափությունների մասին մեր պատկերացումները, մասնավորապես՝ էապես, եթե ոչ արմատապես, տարանջատել Արևմուտքի և Արևելքի զարգացման ուղիները, որն իր հերթին հղի է զանազան ռասայական կամ եվրոպակենտրոն տեսությունների աշխուժացման վտանգով։

Դառնալով կոնկրետ հին Հայաստանին, պետք է նշել, որ առկա սուղ սկզբնաղբյուրները հիրավի բավարար չեն անհերքելիորեն ապացուցելու համար այստեղ լիարժեք ստրկատիրական հասարակարգի գոյությունը։ Հետազոտողները հենվում են համապատասխան տերմինաբանության վերլուծության վրա, օգնության են կանչում հարևան, պատմական նյութերով ավելի հագեցած հասարակությունների հետ համանմանեցումները (անալոգիաները), ինչպես և ընդհանուր տեսական դատողությունները։ Այս ձևով է, որ հաջողվում է տալ հին Հայաստանի հասարակարգի քիչ թե շատ ամբողջական պատկերը։

Մյուս կողմից, սակայն, միանգամայն անհնարին է թվում վերադառնալ «մշտնջենական ֆեոդալիզմի» տեսակետին։ Ու եթե զուտ սոցիալ-տնտեսական, «բազիսային» ոլորտին վերաբերող առկա պատմական տվյալներում ինչպես ասվեց, լիովին չի ուրվագծվում «ստրկատիրական» հասարակության պատկերը, ապա աղբյուրներում միանգամայն պարզորոշ է ներկայանում հին Հայաստանի, այսպես կոչված, «վերնաշենքային» երևույթների զարգացման ուրույն ընթացքը, որը անհերքելիորեն տրոհում է հին շրջանը հաջորդ, միջնադարյան, ֆեոդալական շրջանի նկարագրից։

Ահա մի քանի օրինակ։ Հին հայկական պետությունը, ի դեմս առաջին համահայկական պետության, հանդես է գալիս մ. թ. ա. VI դարում և անկում է ապրում մ. թ. IV—V դդ. սահմանագլխին. սրան հետևում է ինքնուրույն պետության շուրջ հինգհարյուրամյա դադար։ Հայկական քաղաքները, քաղաքային կյանքը Հայաստանում սկիզբ են առնում համահայկական պետության հետ միասին, գուցե քիչ ավելի ուշ, ծաղկում ապրում հելլենիստական դարաշրջանում և փաստորեն դադարում IV դարի վերջերին։ Նոր քաղաքնե-

ը գոյանում են հինգ դար անց։ Հայ հեթանոսական կրոնը ևս, անցնելով զարգացման մի շարք փուլեր, իր բազմադարյան կյանքն է ավարտում IV դարի սկզբին, տեղի տալով քրիստոնեությանը։ Նմանապես և հայ նյութական մշակույթը, ապրելով մի շարք շրջաններ, որոնցում լավ նշմարելի են արտաքին ազդեցությունները, ի վերջո հելլենիստականը, IV—V դդ. վերաճում կամ փոխարկվում է զուտ ազգային մշակույթի՝ իր բոլոր բնագավառներում թոթափելով կամ օրգանապես ներծծելով բոլոր նախկին արտաքին ազդեցությունները և այլն, և այլն։

Այս ամենից հետևում է, որ IV դարը կամ, քիչ ավելի լայն վերցրած՝ III—V դդ. իսկապես որ ողջ հասարակության արմատական, սկզբունքային փոփոխությունների ժամանակաշրջան են եղել։ Ըստ որում, եթե դրանց հաջորդած ժամանակը մենք հաստատորեն բնորոշում ենք որպես «ֆեոդալական», ապա դրանց նախորդած ժամանակը նույնքան հաստատորեն դուրս է մնում «ֆեոդալականի» հորջորջումից, այլապես ի՞նչ բացատրություն տալ տեղի ունեցած արմատական փոփոխություններին։ Ուստի մենք այսօր անվանում ենք այն (որոշակի չափով պայմանականորեն) «ստրկատիրական», բայց այդպիսի սահմանումը սկսում է չափազանց վերացական կամ, ընդհակառակն, չափազանց կոնկրետ երևալ։ Ուրեմն պետք է դարաշրջանի հետագա կոնկրետ ուսումնասիրմանը զուգընթաց փնտրել նոր սահմանում, որն ավելի ճշգրիտ կբնորոշեր դարաշրջանի սոցիալ-տնտեսական էությունը։ Այդպիսին առայժմ չկա ոչ միայն Հայաստանի, այլև մյուս, նմանօրինակ պարագաներում գտնվող հասարակությունների համար։ Այնպիսի հորջորջումներ, ինչպես, օրինակ, «վաղ դասակարգային»-ը, որոնք փորձում են վերագրել այդ հասարակություններին, բավարար չեն։ Կարելի է, իհարկե, օգտագործել «նախաֆեոդալական» տերմինը, բայց դա է՛լ ավելի հեռու է գործի էությունն արտահայտելուց և տչքի է ընկնում սոսկ իր չեզոքությամբ։

Ի վերջո պետք է նշել, որ «սպիտակ բծերի» թվին է պատկանում (ըստ որում առաջին հերթին) կրոնի պատմությունը։ Մինչև օրս այն փաստորեն փոխարինվել է այս կամ այն մշակութային կամ քաղաքական բնույթի հարակից, իր վրա կրոնի ազդեցությունը կրած երևույթների ուսումնասիրությամբ։ Խոսվել է «կրոնական քողի» և այլ նմանօրինակ բաների մասին, սակայն ինքը կրոնը, նրա դոգմատիկան, որը չպետք է շփոթել «դոգմատիզմի» հետ և որը դատարկ բան չէ, քանի որ նրա դրոշի տակ հավաքվել ու պայքարել են, հաղթել ու պարտություն կրել տասնյակ ու հարյուր հազարավոր մարդկային զանգվածներ, առայժմ բնավ հետազոտության առարկա չէ նաև սովետահայ պատմագրության մեջ։ Բացառություն չի կազմում նաև եկեղեցու պատմությունը, հոգևորականության պատմությունը, որոնց ազդեցությունը հնում, համընդհանուր հավատի պայմաններում, հիրավի, մեծ է եղել... Ինչպե՞ս առանց այս բոլորի ճանաչենք իրական պատմությունը։

Ն. Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ (պատմ. գիտ. դոկտոր)։ Մինչվերակառուցման շրջանում տիրապետող գիտական ոչ ստեղծագործական մթնոլորտը և դոգմատիկ գաղափարական տեսակետներն ու կաղապարները ճնշում էին արևելագիտության անկաշկանդ զարգացումը, սահմանափակում և կանխարգելում ստեղծագործական մոտեցումը Արևելքի պատմության, քաղաքականության, փիլիսոփայության, գաղափարախոսության և մշակույթի բազմաթիվ բարդ պրոբլեմների ուսումնասիրության բնագավառում։

Դրությունը ավելի էր բարդանում նրանով, որ Արևելքը զարթոնք էր ապրում, ծագել էին նոր, մինչ այդ անհայտ պրոբլեմներ, որոնք պահանջում էին նորովի մոտեցում, սակայն ասպարեզի վրա էին ստերեոտիպ, դոգմատիկ և հնացած տեսակետներ, որոնց մի մասը ձևավորվել էր 1930-ական թթ., դեռևս Կոմինտերնի ժամանակ, որոնք պարտադիր ուժ ունեին և որոնց, ըստ գոյություն ունեցող կարգի և ավանդույթների, պարտավոր էին հետևել հետազոտողները։ Այս հանգամանքը, արհեստական խոչընդոտներ ստեղծելով, զգալի չափով խանգարեց սովետական, այդ թվում և սովետահայ արևելագի-

տության զարգացմանը, և համաշխարհային արևելագիտության մեջ նրա դիրքերի ամրապնդմանը։

Այժմ, երբ մեր երկրում ընթանում է վերակառուցման հեղափոխական պրոցեսը և վերանայման են ենթարկվում հին ու հնացած, իրենց կենսունակությունն ու ճշմարտացիությունը չապացուցած կոնցեպցիաները, եկել է ժամանակը հրաժարվելու և կամ արմատական վերանայման ենթարկելու մի շարք տեսակետներ և ուղի հարթելու գիտական մտքի անկաշկանդ զարգացման համար։

Մեր կարծիքով խիստ հասունացել է հասարակության զարգացման եվրոպական մոդելները և օրինաչափությունները ինքնաբերաբար Արևելքի երկրների վրա տարածելու մեթոդից հրաժարվելը։ Այդ մոդելի տարածումը հատկապես վնասակար եղավ Արևելքի երկրների միջնադարյան պատմության ուսումնասիրության տեսակետից, երբ փորձեր էին արվում «ֆեոդալ», «ճորտ», «սյուզերեն», «վասալ» ու եվրոպական միջավայրում ձևավորված սոցիալ-դասակարգային այլ հասկացություններ և կատեգորիաներ նույնությամբ փնտրել ու «գտնել» արևելյան հասարակության ընդերքում, առանց հաշվի առնելու այդ հասարակության զարգացման յուրահատկությունները, հողային սեփականության և հողօգտագործման ձևերի տարբերությունները, ցեղային հարաբերությունների առկայությունը և կենսունակությունը, էթնիկական-կրոնական ավանդույթները և այլն։ Այսպես, օրինակ, միշտ և հետևողականորեն չէր, որ հաշվի էր առնվում այն հանգամանքը, որ արևելյան շատ երկրներում ֆեոդալը շատ հաճախ նույն ցեղապետն էր, երբեմն նաև հանդես էր գալիս որպես կրոնապետ, որը նրան շատ կողմերով տարբերում էր եվրոպական ֆեոդալից։ Մինչև վերջ և գիտականորեն համակողմանի կերպով չեն բացահայտված շեյխի և շեյխության ինստիտուտի սոցիալական ֆունկցիաները և տեղը հողային հարաբերություններում։ Հետևանքը լինում էր այն, որ սխալ ելակետից սխալ եզրակացությունների էին հանգում։ Մինչդեռ խնդիրը կայանում է նրանում, որ պետք է արևելյան հասարակության խորազնին ուսումնասիրությունը կատարել սեփական հիմքի և նյութի հիման վրա, առանց ճիգեր գործադրելու արևելյան իրականությունը եվրոպական հասկացությունների շրջանակների մեջ զոռով խցկելու ուղղությամբ։

Եվրոպական մոդելներին տուրք տալը հանգեցրեց այն բանին, որ աղաղաղված կերպով են լուսաբանվել նաև Արևելքի երկրների նոր և նորագույն շրջանի պատմության մի շարք հանգուցային հարցեր, մասնավորապես գաղութային լծի թոթափման և քաղաքական անկախության նվաճման համար մղված պայքարում դասակարգային ուժերի տեղաբաշխման հարցը։ Մենք ի նկատի ունենք այն հանգամանքը, որ շատ հաճախ գերագնահատվել է բանվոր դասակարգի դերը ազգային ազատագրական շարժումներում, նրան վերագրելով առաջատար, անգամ ղեկավար դեր այդ պայքարում, այն դեպքում, երբ պրոլետարիատը Արևելքի երկրների ճնշող մեծամասնությունում այդպիսի դեր պարզապես չէր կարող խաղալ, քանի որ նա փոքրաթիվ էր, թույլ էր զարգացած, դեռևս չուներ համապատասխան դասակարգային ինքնագիտակցություն և այլն։ Դրա արդյունքը լինում էր այն, որ կամա թե ակամա նսեմացվում էր անկախության համար պայքարող մյուս դասակարգերի և սոցիալական խավերի, ինչպես նաև նրանց շահերն արտահայտող կուսակցությունների դերն ու տեղը հակաիմպերիալիստական պայքարում, այլ կերպ ասած՝ խեղաթյուրվում էր պատմական այդ կարևոր պրոցեսի իրական պատկերը։

Մեր կարծիքով վերանայման է ենթակա նաև գաղութատիրության և գաղութային երկրների գնահատականը։ Խոսքն այն մասին չէ, որ արդարացվի գաղութային տիրապետությունը, այլ նրա օբյեկտիվ գնահատականի, տարբերակված մոտեցում ցուցաբերելու և նախկին գաղութների ու կախյալ երկրների հասարակական-քաղաքական կյանքում և տնտեսական զարգացման բնագավառում նրա իսկական տեղն ու դերը որոշելու մասին է։ Մեր միտքը պարզաբանելու համար բերենք հետևյալ օրինակը։ Երբ խոսք է գնում արաբական երկրների նորագույն պատմության սկզբնական շրջանի մասին, սո-

վորարար նշվում է, որ առաջին համաշխարհային պատերազմից հետո նրանք չկարողացան անկախություն նվաճել և օսմանյան լծից ընկան արևմտյան տերությունների, մասնավորապես Անգլիայի և Ֆրանսիայի գաղութային լծի տակ։ Արաբական երկրները, իրոք, ընկան անգլո-ֆրանսիական տիրապետության տակ։ Սակայն դա հիմք չի կարող հանդիսանալ չտեսնել տալու այն շատ էական տարբերությունները, որ կային օսմանյան դաժան լծի և Անգլիայի ու Ֆրանսիայի տիրապետության միջև։ Օսմանյան ամենակործան տիրապետության ժամանակ արաբական ժողովուրդները, ինչպես նաև կայսրության մյուս ոչ թուրք ժողովուրդները՝ հայերը, հույները, սլավոնները և այլն, ենթակա էին ամենաբիրտ ու արյունալի հալածանքների, զանգվածային կոտորածները բարձրացվել էին պետական քաղաքականության մակարդակի, չկար անձի ու գույքի ապահովություն, առկա էր տնտեսական անկումը և հնացած ու իրենց դարն ապրած սոցիալ-տնտեսական հարաբերությունների կոնսերվացումը, ամենաբարբարոս կերպով հետապնդվում էին ոչ թուրք ժողովուրդների ազգային մշակույթը, ազգային լեզուն և այլն։ Ենթակա ժողովուրդները չունեին անգամ հեռավոր կերպով պետական միավորում հիշեցնող իրենց վարչատերիտորիալ բաժանումը։ Ամբողջ կայսրությունը բաժանված էր առանձին վիլայեթների՝ հաշվի չառնելով էթնիկական յուրահատկությունները և պատմական ավանդույթները։ Օսմանյան ռազմաֆեոդալական կայսրությունը մի իսկական զնդան էր նրանում բնակվող ոչ թուրք ժողովուրդների համար։

Գիտական անաչառ մոտեցում ցուցաբերելով և հանուն արդարության պետք է ասել, որ նման իրավիճակ չէր տիրում Մերձավոր և Միջին Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի այն երկրներում, որոնք ազատագրվելով օսմանյան լծից ընկան եվրոպական տերությունների՝ Անգլիայի, Ֆրանսիայի և Իտալիայի տիրապետության տակ։ Որպես կանոն, այդ տարածքում մանդատի կամ պրոտեկտորատի ներքո ստեղծվեցին պետական միավորումներ, որոնք, իհարկե, քաղաքականապես լրիվ կախված էին մետրոպոլիտից, սակայն վերջ տրվեց զանգվածային ջարդերի քաղաքականությանը, Արևելքի երկրները ներգրավվեցին եվրոպական տնտեսական և քաղաքական զարգացման ոլորտը, օբյեկտիվորեն նպաստավոր պայմաններ ստեղծվեցին ենթակա ժողովուրդների համար՝ հաղորդակից լինելու և շփվելու եվրոպական բարձր կուլտուրայի հետ, փոխառնելու նրա ստեղծած հոգևոր արժեքները։ Անգլիան և Ֆրանսիան հիմնական շեշտը դնում էին գաղութների տնտեսական շահագործման, նրանց հումքի աղբյուրի և վաճառահանման շուկայի վերածելու վրա։ Դրա հետ միասին հարկ է նշել, որ նման տնտեսական քաղաքականությունը օբյեկտիվորեն, մետրոպոլիտների կամքից անկախ, նպաստում էր արդյունաբերության որոշ ճյուղերի և արտադրական նոր ձևերի և մեթոդների (թեկուզ և սաղմնային ձևով) առաջացմանն ու զարգացմանը գաղութներում։ Այս էական տարբերությունները չտեսնել և միևնույն հարթության վրա դնել օսմանյան հետադիմական, բռնակալական արյունարբու լուծը և եվրոպական տիրապետության ձևերը, նշանակում է մեղանչել ճշմարտության դեմ, որն իր հերթին փակում է դուռը նախկին գաղութների և կախյալ երկրների անցած պատմական ուղու գիտականորեն հիմնավորված լուսաբանման առջև։ Անկախություն նվաճելուց հետո Արևելքի երկրների զարգացումը չընթացավ միևնույն ուղիով։ Նրանց մի մասը՝ Ալժիր, ԵԺԴՀ, Սիրիա, Անգոլա, Եթովպիա, Բենին և այլն, ընտրել են զարգացման սոցիալիստական կողմնորոշումը, մեծամասնությունը կանգնել է զարգացման կապիտալիստական ուղու վրա, իսկ կա պետությունների մի խումբ, որ դեռևս խարխափում է նախնադարյան տոհմատիրական, ցեղային և կիսաֆեոդալական հարաբերությունների բարդ հանգույցի ոլորտներում։

Ստեղծված պայմաններում ստացվել է այնպես, որ սովետական մի խումբ արևելագետներ առաջադիմական են համարում միայն զարգացման սոցիալիստական կողմնորոշումը և բացառապես նրա շրջանակներում են տեսնում հասարակական առաջադիմության իրականացման հնարավորությունները։ Կասկածից վեր է, որ այդ երկրներում իրականացվում են առա-

ջադիմական սոցիալ-տնտեսական և քաղաքական վերափոխումներ։ Սակայն վիճելին և անընդունելին այն է, որ անտեսելով ֆորմացիաների վերաբերյալ մարքսիստական-լենինյան ուսմունքը, խիստ նեղացվում է հասարակական և սոցիալ-տնտեսական առաջադիմության հասկացությունը և նրա շրջանակների մեջ չի մտցվում զարգացման կապիտալիստական ուղին։ Չպետք է մոռանանք, որ զարգացման կապիտալիստական ուղին խոշոր առաջընթաց քայլ է և որպես հասարակական-քաղաքական ու սոցիալ-տնտեսական համակարգ անհամեմատ ավելի բարձր է իրեն նախորդած բոլոր հասարակական ֆորմացիաների հետ համեմատած։ Հիշենք, թե Կ. Մարքսը, Ֆ. Էնգելսը և Վ. Ի. Լենինը ինչպիսի մեծ նշանակություն էին տալիս կապիտալիզմի զարգացմանը միջնադարյան խավարամտության, հին, հետամնաց կացութաձևերի, ցեղային հարաբերությունների, կրոնական նախապաշարմունքների վերացման, լուսավորության տարածման և ապագա սոցիալիստական հեղափոխությունների նախապատրաստման տեսանկյունից։ Եվ այս առումով, ինչպես նաև ելնելով Արևելքի երկրներում ստեղծված կոնկրետ իրավիճակից, հասարակական առաջադիմության շրջանակները պետք է ընդարձակել և նրա հասկացության մեջ մտցնել նաև այն սոցիալ-տնտեսական վերափոխումները, որոնք իրականացվում են կապիտալիստական հարաբերությունների հիմքի վրա։ Դրա հետ միասին պետք է ընդգծել նաև, որ գոյություն ունեն առաջադիմության տարբեր՝ բարձր և ցածր աստիճաններ, ելակետ ունենալով մարքսիստական-լենինյան այն դրույթը, որ մարդկության պատմության զարգացումը մշտապես ընթանում է վերընթաց գծով՝ ցածից դեպի բարձրը։

Արևելագիտության առջև մշտապես կանգնած կարևորագույն հարցերից մեկը եղել է իսլամի, հասարակության մեջ նրա տեղի և դերի որոշման խնդիրը։ Սակայն ուսումնասիրողների տեսադաշտից վրիպեց այն նոր սոցիալ-քաղաքական ֆունկցիան, որ սկսեց կատարել իսլամը Արևելքի երկրների կողմից քաղաքական անկախություն նվաճելուց հետո։ Իսլամը դարձավ կարևոր գործոն մուսուլմանական երկրների ներքին և արտաքին քաղաքականության սկզբունքների, նրանց պետական և հասարակական-քաղաքական կառուցվածքի որոշման մեջ, դառնալով այդ երկրների սահմանադրական-ինստիտուցիոն մեխանիզմի վճռող բաղադրամասերից մեկը։ Դրա պատճառները պետք է փնտրել այդ երկրների յուրահատուկ սոցիալ-տնտեսական կառուցվածքի, ավանդույթների, իսլամը պետական կրոն հռչակելու և, վերջապես, իսլամի քաղաքականացման մեջ, երբ իսլամը սկսեց քաղաքական ֆունկցիաներ կատարել։ Սրանք նոր պրոբլեմներ են, որոնք խորը և բազմակողմանի գիտական իմաստավորման կարիք են զգում։ Մյուս կողմից, սովետական արևելագետները ցարդ հիմնավոր կերպով չեն բացատրել «իսլամը որպես ապրելաձև» և «իսլամը որպես գաղափարախոսություն» երևույթների էությունը և յուրահատկությունը։ Իսկ առանց այս հարցերի լուսաբանման մենք չենք ունենա ժամանակակից քաղաքականացված իսլամի հավաստի պատկերը։

Այս բոլորի հետ միասին հայ արևելագետները մեծ պարտք ունեն ընթերցողին մի այնպիսի կարևոր բնագավառում, ինչպես հայերի պատմամշակութային և քաղաքական առնչությունները մոտիկ և հեռավոր արևելյան երկրների և ժողովուրդների հետ։ Այս բնագավառում, անուրանալի է, որոշ բան կատարվել է, սակայն դա դեռևս հեռու է բավարար համարվելուց։ Մեր կարծիքով հայ արևելագետների խնդիրներից մեկը պետք է լինի հայկական աղբյուրների մատչելի դարձնելը օտարերկրյա արևելագետների համար և դրանք գիտական շրջանառության մեջ դնելը համաշխարհային գիտության մի այնպիսի կարևոր բնագավառում, ինչպիսին արևելագիտությունն է։ Դա կարելի է անել աղբյուրները թարգմանելու և հրատարակելու միջոցով։

Վ. Ա. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ (պատմ. գիտ. դոկտոր)։ *Այժմ արդեն վերակառուցման անհրաժեշտությունը ընդունում են բոլորը, նույնիսկ պահպանողականները։ Անուղղելի բյուրոկրատն անգամ, որի շահերին վերակառուցումն ամենից ավելի է հարվածում, ստիպված է գոնե խոսքով ընդունել նրա կարևո-*

ությունը, թեկուզև յուրովի նրան հարմարվելու համար։ Պատմաբանները ոչ թե պիտի հարմարվեն վերակառուցմանը, այլ հասարակագետների շարքում նրանք պարտավոր են թերևս ստանձնել առաջամարտիկների դեր։ Սակայն այդ մասին այսօր խոսք անգամ չի կարող լինել. պատմաբաններին ժողովրդի կողմից այժմ ներկայացվող պահանջն ու դժգոհությունը հիմնականում արդարացի է և օրինաչափ, թեև ոչ բոլոր դեպքերում։ Պատմաբանների շարքերում ևս նշմարվում են տեղաշարժեր, բայց դանդաղ, հևիհև և վեհերոտ... չլինի թե հանկարծ ամեն ինչ շուռ գա հին հունով։ Այո, վախը դեպի հետընթաց շրջադարձը, որ թելադրվում է ոչ հեռավոր անցյալի դառը փորձով, պատմաբանների (և ոչ միայն նրանց) դանդաղ վերակառուցվելու պատճառներից մեկն է։ Ոմանք էլ «հեռատեսորեն» դոփում են տեղում՝ նախկին «երանելի» ժամանակների վերադարձի սպասումով, ժամանակներ, երբ գրելու համար խիղճն ու խելքը խանգարում էին, պարզապես հարկավոր էր պատմական փաստերը տեղավորել գոյություն ունեցող ցուցումների ու սխեմաների շրջանակներում։

Սակայն մեր դանդաղ վերակառուցվելը ունի նաև օբյեկտիվ պատճառներ։ Լրագրողներն, օրինակ, շատ սրընթացորեն են բարձրացնում պատմական այս կամ այն հարցը, հաճախ չմտահոգվելով նրա լուսաբանման համար անհրաժեշտ նյութի հայթայթման խնդրով, երբեմն էլ շարաշահելով շարքային ընթերցողի էմոցիոնալ հետաքրքրությունը տվյալ թեմայի հանդեպ։ Մեզանում նրանց հետ, դժբախտաբար, ներդաշնակվում են որոշ պատմաբաններ, որոնք, թերևս իրենց անիրազեկության պատճառով, ժխտում են նաև առկա ձեռքբերումները։ Այդպես է վարվել, օրինակ, Շ. Հարությունյանը, ղարաբաղյան շարժման այս օրերին շահեկան համարելով փաստորեն անտեսել Արցախի պատմության հարցերում և մանավանդ նրա կեղծարարությունների դեմ վերջին տարիներին մեր պատմաբանների կատարած նկատելի աշխատանքը, հայտարարելով, թե այդ խնդրում «հարկ եղած գիտական պատասխան չի տրվել ադրբեջանական առանձին պատմաբաններին»։ Մնում է կարծել, որ հոդվածագիրը իրոք անտեղյակ է այն մենագրություններին և մեկ ու կես տասնյակ հոդվածներին, որոնք հրատարակել են ՀՍՍՀ ԳԱ պատմության և արևելագիտության ինստիտուտների աշխատակիցները հենց այդ պրոբլեմի աղերսով (տե՛ս «Սովետական Հայաստան», 7 հունիսի, 1988 թ.)։ Հավանաբար, նույն անտեղյակության պատճառով է Շ. Հարությունյանն անում այն հայտարարությունը, որ իբր Ուրարտուի պատմության հարցերի մասին «դիսկուսիոն բնույթի հոդվածներ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի գիտական հանդեսներում տեղ չեն գտել», այն ժամանակ, երբ թե՛ «Պատմա-բանասիրական հանդեսի» և թե՛ «Լրաբերի» վերջին տաս-տասնըհինգ տարիների համարները լի են Ուրարտուի և հայ ժողովրդի ծագման պրոբլեմին նվիրված հոդվածներով։ 1980 թ. «Լրաբերը» անգամ բանավեճ է բացել այդ հարցերի շուրջը, որը դեռ չի ավարտված։

Բայց, այնուամենայնիվ, ո՞րն է մեր թույլ տեղաշարժի օբյեկտիվ խոչընդոտը։ Իմ կարծիքով այդ պատճառը պատմական գիտության առանձնահատկության մեջ է, այն բանի մեջ, որ պատմական լուրջ աշխատությունը լրագրային հոդված չէ, այն ոտքի վրա չի ստեղծվում, պահանջում է տարիների քրտնաջան ու համբերատար աշխատանք։ Անառարկելի իրողություն է սա, որի ապացույցը մեր մեծերի փորձն է։ Վերցրեք, օրինակ, Հ. Մանանդյանի, Ն. Ադոնցի, Աշ. Հովհաննիսյանի աշխատություններից որ մեկը ուզեք, և կտեսնեք, որ նրա ստեղծմանը նախորդել է տևական աշխատանք՝ հագեցված փաստական նյութի խոր ուսումնասիրությամբ, նրա համեմատական քննությամբ և, հարկավ, նաև լեզվագիտական պաշարի լայն օգտագործմամբ։

Ողջունելով «Պատմա-բանասիրական հանդեսի» սույն նախաձեռնությունը և օգտվելով ընձեռվող հնարավորությունից, կուզենայի մի քանի հարցերի շուրջ մտքեր փոխանակել։ Վերցնենք, օրինակ, պատմության մեջ անհատի դերի գնահատման հարցը։ Մենք այն աստիճան տարվել էինք խոսքով ժողովրդական մասսաների դերի ընդունմամբ և անհատի դերի փաստո-

բեն ժխտմամբ (ճանաչելով, իհարկե, մեկ անհատ), որ պատմության մեջ անհատի և ժողովրդական մասսաների խաղացած դերի փոխհարաբերության ճշմարտացի լուսաբանման փոխարեն զբաղվում էինք սնամեջ և ոչինչ չասող հայտարարություններով, թեև բոլորի աչքի առաջ, աջ ու ձախ ջարդելով, բարձրանում էր ոճրագործ մի անձ՝ Ստալինը, որի պաշտամունքի հետևանքների վերացումը, հավանաբար, մեկ սերնդի գործ չէ։ Այդ ասելով՝ նկատի ունենք նաև հոգևոր ծանր ու անկշռելի վնասը, մարդկանց արդարացի և ազատ դատելու, գրելու ու խոսելու հնարավորությունից զրկելը, ծայրահեղ գերզգուշությունը, կասկածամտությունը, որոնք դեռ այսօր էլ շարունակում են իշխել ոմանց հոգիների վրա։ Սակայն Ստալինի օրինակն էլ, որի պաշտամունքի պայմաններում շատ դեպքերում ըստ էության մոռացության էին մատնվում նույնիսկ Մարքսը, Էնգելսն ու Լենինը, բավական է ըմբռնելու համար, թե իշխանությամբ օժտված անհատը ինչպիսի մեծ դրական կամ բացասական դեր կարող է խաղալ պատմության մեջ։ Ուրեմն, պատմական գիտության ուսումնասիրման առարկան նաև այդ խնդրի լուսաբանումն է, այն էլ համակողմանի, քանի որ առանց նշանավոր գործիչների չկա պատմություն։

Մի քանի խոսք ազգային հարցի մասին։ Ովքեր ասես, որ մեզանում չէին զբաղվում այդ հարցի «մշակմամբ». պատմաբանները, փիլիսոփաները, հոգեբանները, անգամ տնտեսագետները։ Բայց բոլորը, կամ գրեթե բոլորը, գրում էին նույնը, մեկնակետ ունենալով ազգերի մասին Ստալինի աշակերտական մակարդակի, շրջանակների մեջ փակուղված «գրույթները»։ Ազգը դադարել էր դիտվել որպես ամբողջական էթնիկական միավոր, մոռացության էին տրվել ազգային հարաբերություններում առկա պրոբլեմները, վարագուրվել էին հակասությունները, սովետական մշակույթ ընդհանրական հասկացության տակ անտեսվում էին ազգային առանձնահատկությունները, կարծես թե վերջիններիս ընդունումն ու ըստ էության լուսաբանումը ստվեր կգցեին ինտերնացիոնալ բարեկամության վրա։ Ինչպես տեսնում ենք, այս խնդիրներում ևս պատմաբաններին շատ անելիքներ են սպասում։ Ժամանակն է, որ մեր հասարակագետները ցույց տան, որ պետք է յուրաքանչյուր ժողովրդի թույլ տալ ապրելու ըստ իր ազգային ձգտումների և այս հարցում «վերից» հրամայական-բյուրոկրատական ճնշման պահպանումը առաջ կբերի «ներքևի» ուժեղ դիմադրությունը և հարցի լուծումը կմղի փակուղի։

Հույժ ուշագրավ է նաև կենտրոնական մամուլում արդեն արծարծվող այն հարցադրումը, թե ապրելակերպով, նյութական բարիքներից ու արտոնություններից օգտվելու իրենց հնարավորությամբ մեր հասարակության անդամները ինչպիսի փոխհարաբերության մեջ են միմյանց նկատմամբ, թե այդ առումով մեզանում արդյոք գոյություն ունե՞ն սոցիալական տարբեր խմբեր։ Եթե հետևենք վերջին 40 տարիների մեր պատմական գրականությանը, ապա կտեսնենք, որ դրանք ամենևին բացակայում են։ Իրականում դա բոլորովին էլ այդպես չէ, և դրա պատճառը, կարծում եմ, այն սխալ մտայնությունն էր, թե արտադրության միջոցների նկատմամբ մասնավոր սեփականության վերացումը վերացրել է նաև դրանց հիման վրա ստեղծվող նյութական բարիքներից օգտվելու անհավասարությունը։ Մենք, իհարկե, գիտենք, որ սոցիալիզմը ձախ հավասարեցում չէ, որ նրա սկզբունքով յուրաքանչյուրը պետք է ստանա ըստ իր ընդունակությունների և կատարած աշխատանքի։ Բայց մի՞թե դա նշանակում է, թե բյուրոկրատիայի վերին, միջին ու նաև՝ ստորին խավերի ապրելակերպը համապատասխանում է նրանց ընդունակություններին և կատարած աշխատանքին։ Ո՞վ է չափել այդ աշխատանքը և ի՞նչ չափանիշով են սահմանորոշվում նրանց արտոնությունները, օրինական ու անօրինական ճանապարհով բարիքներից օգտվելու հնարավորությունները՝ ընդհուպ մինչև սպասարկող անձնակազմը, ավտոմեքենաները, առողջարանները, հատուկ խանութները և այլն, և այլն։

Եթե վերակառուցումը սոցիալական հեղափոխություն է (իսկ դա այդպես է), ապա, ինչպես ամեն մի հեղափոխություն, նրա գլխավոր հարցը և՝ իշխանության հարցն է։ Տվյալ դեպքում այդ հարցը հանգում է նրան, որ իշ-

խանությունը իրապես անցնի սովետների ձեռքը, սրանք դառնան իսկապես լիիրավ ժողովրդաիշխանություն, օժտված լինեն օրենսդրական կայուն ու անխափանելի հատկանիշներով և դադարեն լինել վարչաբյուրոկրատական համակարգի (այդ թվում նաև կուսակցական) կամակատարներ։ Բայց պատմության մեջ դեռ ոչ ոք իշխանությունը կամովին չի զիջել։ Այն կամովին չի զիջի նաև ներկա վարչաբյուրոկրատական համակարգը, որը 70 տարի շարունակ ընտելացել է առանց վերահսկողության կառավարելուն։ Իշխանության համար մղվող պայքարը այժմ պայքար է, մի կողմից, այդ բյուրոկրատիզմի, իսկ մյուս կողմից՝ հասարակության առողջ ուժերի միջև, որոնց կուսակցությունը բարձրացրել է հանուն կյանքի լենինյան նորմերի վերականգնման, հանուն իսկական ժողովրդաիշխանության։ Պատմաբանների խնդիրն էլ հենց այն է, որ համակողմանի բացատրեն, թե կուսակցության ղեկավարությունը նշանակում է ոչ թե սովետների իշխանության փոխարինում, այլ նկատի ունի դրանց նկատմամբ գաղափարական տևական աշխատանքի ապահովում։

Պատմական ցանկացած հարցի ճշմարտացի հետազոտման անժխտելի պայմանը փաստերին ու երևույթներին հավատարիմ մնալն է և ոչ թե դրանք կանխապես ուրվագծված կամայական սխեմաներին հարմարեցնելը, որ տարիներ շարունակ գերիշխում էր պատմագրության մեջ։ Բանն այնտեղ էր հասել, որ փաստական նյութերից անխուսափելիորեն բխող ճշմարտացի շարադրանքը, եթե այն ինչ-որ տեղ չէր ձայնակցում ստալինյան գռեհիկ սոցիոլոգիզմին, դիտվում էր որպես բուրժուական օբյեկտիվիզմ, իսկ նրա հեղինակին էլ առնվազն կպցվում էր տիրացուի կամ թալմուդիստի պիտակը։ Ահա թե ինչու եզակի էին այն պատմաբանները, որոնք համարձակվում էին խախտել այդ պրակտիկան, եզակի էին, որովհետև անմիջապես հետևում էր դաժան հաշվեհարդարը, որից խուսափելու գրեթե համատարած ձգտումը այն օրերի համար նորմ էր, և թող այսօրվա քաջերը դա պարսավանքի նշանակետ չդարձնեն։ Հեշտ բան չէր ընկնել ստալինյան զնդանները կամ, խուսափելով դրանցից, զրկվել հանապազօրյա հացից, այն էլ երկարատև։ Մեր այնօրվա պատմաբաններին արդարացնելու համար չէ, որ շեշտում ենք դա, այլ պարզապես ուզում ենք, որ այսօրվա ազատ շունչ քաշողը մոռացության չտա այն տարիների հեղձուցիչ և վտանգավոր մթնոլորտը։

Մեր՝ պատմաբաններիս, անելիքները դեռ շատ-շատ են։ Մենք պարտքի տակ ենք մեր ժողովրդի առաջ, և դա վերաբերում է հայ ժողովրդի պատմության պատմական գրեթե բոլոր շրջանների պրոբլեմների նորովի լուսաբանմանը, սկսած նախաուրարտական և ուրարտական ժամանակների հարցերից (որոնք, ի դեպ, վերջին տարիներին ոմանք դարձրել են «հայրենասիրություն» խաղալու դրոշ) ընդհուպ մինչև մեր օրերի խնդիրները։ Կկարողանա՞նք արդյոք դուրս գալ այդ պարտքի տակից։ Այդ հարցի պատասխանը պետք է լինեն առաջիկայի մեր գործերը և մանավանդ ժողովրդի կողմից դրանց տրվող գնահատականը։

Ա. Ս. ՀԱՄԲԱՐՅԱՆ (պատմ. գիտ. դոկտոր)։ Անհատի պաշտամունքը լուրջ վնաս հասցրեց հայ ժողովրդի նոր պատմության հարցերի ուսումնասիրմանը։ Ղեկավարվելով Ստալինի այն տխրահռչակ հայտարարությամբ, թե միայն սովետական իշխանության հաստատումը լուծեց Հայկական հարցը, պատմաբանները երկար ժամանակ հրաժարվեցին Արևմտյան Հայաստանի ու արևմտահայության պատմության ուսումնասիրությունից, մի կողմ թողեցին պատմական Հայաստանի տարածքները և սահմանափակվեցին միայն Սովետական Հայաստանի տերիտորիայով։ Ովքեր փորձում էին խախտել այդ նորմերը, մեղադրվում էին նացիոնալիզմի մեջ և որպես կանոն ճաշակում դրա «քաղցրությունները»։ Միայն քչերը արիություն ունեցան խախտել այդ դրվածքը և լուսաբանել արևմտահայության պրոբլեմները, բայց նրանք էլ կարողացան հրապարակել իրենց ուսումնասիրությունների արդյունքները միայն Ստալինի մահից հետո։ Մինչդեռ հանրահայտ է, որ Հայկական հարցը ոչ թե արևելահայության կամ Արևելյան Հայաստանի, այլ արևմտահայության

կամ Արևմտյան Հայաստանի հարցն էր։ 1950-ական թթ. երկրորդ կեսերից պատմաբանները լուրջ աշխատանքներ կատարեցին արևմտահայության պատմության ուսումնասիրության ասպարեզում, տուրք չտալով կամ համարյա չտալով «լճացման» տարիների ետադարձ պահանջներին։ Նրանց հետազոտությունների գլխավոր արդյունքներն ամփոփվեցին հայ ժողովրդի պատմության 5-րդ և 6-րդ հատորներում։

Անհատի պաշտամունքի տարիներին մասնագետները, ղեկավարվելով Ստալինի այն նեղմիտ դրույթով, թե պատմաբանները պիտի զբաղվեն միայն անմիջական արտադրողների պատմությամբ, մի կողմ դրեցին բուրժուազիայի, նրա կուսակցությունների պատմությունը և այլ պրոբլեմներ, որի հետևանքով հայ ժողովրդի պատմությունը դարձավ միակողմանի ու աղքատիկ։ Մինչդեռ հանրահայտ է, որ բուրժուազիան կարևոր դեր է խաղացել երկրի արտադրողական ուժերի զարգացման գործում, իսկ կուսակցությունները նպաստել են ժողովրդի ազգային գիտակցության վերելքին, ուղիներ որոնել նրա գոյության պահպանության ու ազատագրության համար։ Այլ բան է, որ նրանք ընտրել են սխալ ուղիներ, որը պետք է քննադատել։ Բայց այդ սխալներն էլ ունեցան ճանաչողական նշանակություն և այսպես թե այնպես նպաստեցին ճշմարիտ ուղու հայտնագործությանը։

Ստալինի կառավարման տարիներին պատմաբանները խուսափում կամ համարյա խուսափում էին ցարիզմի հայահալած վարքագծի քննադատությունից, փորձում էին սքողել նրա գաղութային քաղաքականությունն Անդրկովկասում, հատկապես Հայաստանում և ըստ էության մերժում էին Վ. Լենինի պարզ ու հստակ բնութագրումները Կովկասի, որպես գաղութի մասին։ Նրանց մի մասը այդ դոգմատիկ ու սխալ տեսակետները պահպանեց նաև բրեժնևյան «լճացման» տարիներին։ Բարեբախտաբար լրջմիտ ու արդարադատ պատմաբանները վճռականորեն մերժեցին այդ ամենը և հարազատ մնացին ճշմարտությանը։

ՍՍՀՄ ԿԿ-ի վերակառուցման քաղաքականությունը մեծ ասպարեզ է բացում ինչպես երկրի սոցիալ-տնտեսական, այնպես էլ քաղաքական ու գաղափարական զարգացման համար։ Այն հնարավորություն է տալիս նաև հայ պատմաբաններին վերացնելու անցյալում եղած սխալները, լրացնելու պատմության սպիտակ էջերը և գրելու պատմությունն այնպես, ինչպես այն եղել է։ Ի՞նչ անելիքներ ունենք մենք։

Նախ ասենք, որ դեռ քիչ բան է կատարված Հայաստանի պատմական դեմոգրաֆիայի հետազոտման ասպարեզում։ Մենք պետք է ստույգ կամ գոնե իրականության մոտ պարզենք հայ բնակչության թիվը պատմական Հայաստանում, նրա արևելյան ու արևմտյան հատվածներում, Ռուսաստանում ու Թուրքիայում և ընդհանրապես ամբողջ աշխարհում XIX դարի առաջին կեսին, երկրորդ կեսին, XX դարի սկզբին, հատկապես առաջին աշխարհամարտի ու դաշնակցության կառավարման տարիներին, հավաստի տվյալներով վեր հանենք պատերազմի ժամանակ Ռուսաստանում ու Թուրքիայում հայ զորակոչվածների, ռուսական բանակում հայ կամավորների, վիրավորների ու սպանվածների քանակը։ Անհրաժեշտ է որքան հնարավոր է ճշտել, թե ինչքան հայ է սպանվել թուրքական կառավարության կողմից կազմակերպված հայկական պարբերական ու մասսայական կոտորածների ժամանակ, ինչքան են արտագաղթել աշխարհի տարբեր երկրները, հատկապես Ռուսաստան և ինչպես է դասավորվել նրանց ճակատագիրը։ Պիտի պարզել նաև, թե ինչքան հայ է մահացել անբերրիության ու սովի տարիներին, զանազան հիվանդություններից ու մասսայական համաճարակներից։

Մենք պետք է լուսաբանենք Հայաստանի բոլոր ժողովուրդների պատմությունը, ցույց տանք, թե երբ և ինչպես են նրանք հաստատվել այստեղ, որոշենք յուրաքանչյուրի զարգացման մակարդակը, փոխադարձ կապերն ու կապակցությունները, ազատագրական համատեղ պայքարի դրվագները։ Այդ խնդիրն անհամեմատ բարդ է Արևմտյան Հայաստանում, ուր թուրքական կառավարության ակտիվ միջամտության հետևանքով տեղի էին ունենում ժողովուրդների ձուլման ու նվազման, արտամղման ու անհետացման պրո-

ցեսներ։ Հատուկ ուշադրություն պետք է դարձնել նրանց ազգագրական ու կրոնական խնդիրների վրա և վեր հանել գիտության համար կարևոր նշանակություն ունեցող անցման պահերը։

Մենք պետք է հանգամանորեն պարզենք հողային հարաբերությունների տիպոլոգիան (տիպաբանությունը), նրանց վարիացիաներն (տարատեսակությունները) ու գրադացիաները (աստիճանավորումները) երկրի տարբեր շրջաններում։ Այդ երևույթներն առկա են եղել Արևելյան, բայց ավելի շատ Արևմտյան Հայաստանում, ուր համարյա ամեն մի շրջան ուներ իր առանձնահատկությունը։ Անհրաժեշտ է պարզել նրանց սերումը, ապրած փոփոխությունները, իրական վիճակը, փոխադարձ կապերն ու ազդեցությունները և զարգացման կամ քայքայման հեռանկարները։ Հատուկ ուշադրություն պետք է դարձնել կառավարության ազգային ու հողային քաղաքականության վրա, որովհետև այն կարևոր նշանակություն է ունեցել հողային հարաբերությունների հասար, հաճախ պայմանավորելով նրանց մակընթացություններն ու տեղատվությունները։ Անբավարար է ուսումնասիրված հայ, հատկապես արևմտահայ վանական-եկեղեցական հողատիրությունը։ Բավական է նշել, որ մինչև այժմ հրապարակի վրա չկա այդ հարցին նվիրված գոնե մեկ մասնագիտական ամբողջական ուսումնասիրություն։ Մեր պատմագրության կողմից շեշտված է գերազանցապես հայ հոգևորականության բացասական գործունեությունը, բայց հայտնի է, որ նա խաղացել է նաև դրական դեր, նպաստել է հայ դպրոցի ու մշակույթի զարգացմանը, հայ պետականության բացակայության պայմաններում ազգային ցրված բեկորները հոգեպես համախմբել և կապել է միմյանց հետ, ղեկավարել է ընդհանուրի գործունեությունը, նպաստել ազգապահպանման, իսկ հաճախ նաև առաջընթացի գործին։

Մենք լուրջ անելիքներ ունենք նաև հայ իրականության մեջ կապիտալիզմի պրոբլեմների ուսումնասիրման բնագավառում։ Հարցը Արևելյան Հայաստանում այսպես թե այնպես լուսաբանված է, սակայն Արևմտյան Հայաստանում անհրաժեշտ է հետազոտել ավելի հանգամանորեն։ Մենք միայն հայ ընթերցողին ենք ցույց տվել այն փաստը, որ կապիտալիստական հարաբերությունները XIX դարի վերջին ու XX դարի սկզբին արդեն ներթափանցել էին Արևմտյան Հայաստան, մինչդեռ մյուս ժողովուրդների մեջ գերիշխում էին կիսանահապետական ու կիսաֆեոդալական հարաբերությունները։ Իսկ ռուս թուրքագետները, չիմանալով այդ իրավիճակը, սովորաբար հայտարարում են, որ Օսմանյան կայսրության արևմտյան մասում, գերազանցապես Բալկաններում, որոշակի զարգացման էր հասել կապիտալիզմը, իսկ արևելյան մասում՝ այսինքն՝ Արևմտյան Հայաստանում, տակավին տիրապետում էին նահապետական-ֆեոդալական հարաբերությունները, մի մակարդակի վրա դնելով այստեղ բնակվող բոլոր ժողովուրդներին։

Դեռ քիչ են ուսումնասիրված արհեստագործությունը, մանավանդ Արևմտյան Հայաստանում, համարյա ոչինչ չի գրված կոոպերացիայի մասին, որը կովկասահայ կյանքում հատկապես XX դարի սկզբին նշանավոր երևույթ էր և շատ էր պրոպագանդվում։

Մասնագետները, անշուշտ, բավական հանգամանորեն ուսումնասիրել են բանվորական և գյուղացիական շարժումները Արևելյան Հայաստանում, բայց նրանք չեն պարզել կամ համարյա չեն պարզել, թե որքան մարդ է մասնակցել այս կամ այն շարժմանը, ինչքան է եղել զոհերի թիվը։ Հատկապես պիտի վեր հանել, թե գյուղացիական շարժումները երկրի որ մասում ինչ ձևերով ու չափերով են դրսևորվել և այնուհետև կատարել ընդհանրացումներ։ Քիչ բան է արված Արևմտյան Հայաստանում արհեստավորների, բանվորների ու գյուղացիների ելույթների ուսումնասիրման բնագավառում։ Անհրաժեշտ է ուսումնասիրել ոչ միայն պրոլետարական, այլև ոչ պրոլետարական կուսակցությունների կողմից կազմակերպված ու ղեկավարված շարժումները։

Շատ է գրված հայ-թաթարական կամ ադրբեջանական կոտորածների մասին մասնավորապես 1905—1907 թթ. և իբրև կանոն հիշատակվում է, որ դրանք նախապատրաստել ու հրահրել է ցարիզմը։ Սակայն ոչինչ չի ասվում, որ այդ ոճրագործության մեջ իրենց որոշակի դերն են խաղացել նաև

սուլթանական կառավարության Անդրկովկասում վխտող գործակալները։ Անհրաժեշտ է խորացնել այդ կոտորածների ուսումնասիրությունը, պարզել, թե երկրամասի որ շրջանում նրանք ինչպես են սկսվել, ընթացել ու ավարտվել և ինչքան զոհեր են եղել։ Հատկապես պիտի պրոպագանդել երկրամասի ժողովուրդների բարեկամությունը և նրանց լավագույն զավակների ինտերնացիոնալ գործունեությունը։

Անհրաժեշտ է խորացնել հասարակական հոսանքների ուսումնասիրությունը, պարզել վերջին հաշվով, թե քանի հոսանքներ են եղել XIX դարի երկրորդ կեսին, նրանցից որո՞նք են եղել հիմնական, որո՞նք միջանկյալ։ Հատկապես պետք է խորացնել XX դարի սկզբի նրանց գործունեության ուսումնասիրումը։ Ոմանք կարծում են, թե կուսակցությունների երևան գալով հոսանքները անհետանում են։ Մինչդեռ հոսանքները շարունակում են գոյատևել ու կարևոր դեր խաղալ հասարակական-քաղաքական կյանքում նաև կուսակցությունների առկայության պայմաններում։ Պետք է գրել նաև կուսակցությունների, կազմակերպությունների ու ընկերությունների պատմությունը, ցույց տալով նրանցից յուրաքանչյուրի տեղն ու դերը մեր անցյալում։ Անհրաժեշտ է ստեղծել Լեռնային Ղարաբաղի պատմությունը, որը մնում է որպես սպիտակ էջ։

Քիչ բան է կատարվել սկզբնաղբյուրների ու աղբյուրների հրատարակման գործում։ Անհրաժեշտ է լույս աշխարհ հանել նորանոր նյութեր՝ հայ ժողովրդի ինչպես սոցիալ-տնտեսական, այնպես էլ ազգային-ազատագրական ու հեղափոխական շարժումների վերաբերյալ։ Պիտի զարկ տալ հուշագրությունների ստեղծմանը, մի բնագավառ, ուր մենք թերացել ենք, բայց անհրաժեշտ է կատարել այն, ինչը դեռ հնարավոր է։

Պ. Մ. Մուրադյան (պատմ. գիտ. դոկտոր)։ Մեզանում միջնադարագիտության ձեռքբերումները քիչ չեն, հատկապես եթե նկատի ունենանք վերջին տասնամյակների հրապարակումները, մենագրություններն ու ընդհանրացնող աշխատությունները. ձեռագրական հիշատակարանների 9 հատորը, վիմագրության 6 պրակը, ակադ. Ա. Հովհաննիսյանի «Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության» երկհատորը, Հ. Անասյանի «Հայկական մատենագիտության» երկու գիրքը և շատ այլ աշխատություններ հիրավի մնայուն և հիմնարար գործեր են։ Եվ այնուամենայնիվ, միջնադարագետ հայագետը դժկամելու, հանդիմանել-հանդիմանվելու բավական շատ հիմքեր ու առիթներ ունի։ Կփորձեմ համառոտակի թվարկել այդ առիթները՝ մասնավորեցնելով խոսքս։

1. Մենք գերազանցապես զբաղվում ենք հայոց ու Հայաստանի քաղաքական պատմությամբ, մանավանդ անցուդարձերի ժամանակագրական դասդասմամբ, հաճախ մոռացության տալով տնտեսական պատմության կարևորությունը՝ հարկերն ու տուրքերը, նրանց չափերն ու գանձման եղանակները, առ այդ կյանքի կոչված գործակալությունները, նրանց լիազորություններն ու գործունեության շրջանակները, ապրանքային արտադրությունը, իրացման եղանակները, գյուղական համայնքի ու քաղաքային կենտրոնների տնտեսական առնչակցությունը, ներմուծման ու արտահանման ծավալը, դնի չափանիշը, գնողունակության մակարդակը և այլն։

2. Վատ ենք պատկերացնում ներդասային, միջդասային հակամարտությունները ու բախումները, նրանց տնտեսական ու գաղափարական ակունքները։ Արդարացիորեն ուշադրության առնելով մեր ժողովրդի պայքարը օտար նվաճողների դեմ, մի տեսակ մոռացության ենք տվել երկրի ներքին կյանքը, նրա ելևէջները, առօրյան՝ հագուստ-կապուստից մինչև ուտեստն ու կենցաղավարությունը։ Իհարկե, այդ ամենը պայմանավորված է և սկզբնաղբյուրներում եղած տեղեկությունների սակավությամբ, բայց արդարամիտ լինենք՝ եղածն էլ չենք փորձում ճանաչել ու իմաստավորել։

3. Գուցե հարկադրական, այնուամենայնիվ՝ անկարելի անփութություն ենք ցուցաբերում հայ ժողովրդի միջնադարյան պատմության մի առանձնահատկության հանդեպ. պետականության չգոյության պարագայում մեզանում

եկեղեցին ստանձնել էր ազգային կյանքը կարգավորող, վարչական, բարոյական, քաղաքական, տնտեսական, իրավական և բազում այլ հարցեր հոգացող ինստիտուտի ֆունկցիա։ Գրեթե ոչինչ չենք անում այդ ինստիտուտի հետ կապված խնդիրներն ուսումնասիրելու համար։ Մի ժամանակ գոհանում էինք անտեղի քարկոծումով, անաստվածների ակումբներ ստեղծելով։ Դա, անշուշտ, ավելի հեշտ էր, քան խորագիտակ ուսումնասիրություն կատարելը, բայց այսօր վարկպարագի վճիռներով խնդիր չես քննի։ Ասենք՝ անկեղծ ցանկության դեպքում էլ մենք հիմա դժվարանում ենք հարցի կարևորությունը պատկերացնել, քանի որ հայագետների շրջանում չունենք գեթ մեկը, որ իրապես եկեղեցու գիտական պատմությամբ կարողանար զբաղվել։

4. Ամենևին պատահական չէ, որ մեզանում լուրջ քայլեր չեն արվում եկեղեցական կոչված մատենագրությունը ուսումնասիրելու մարզում։ Դավանության պատմություն չիմացողը ինչպե՞ս կարող է շարականներ, ճառեր, մեկնություններ, ներբողյաններ, վարքեր-վկայաբանություններ, քարոզներ, հակաճառություններ ու շատ այլ բնագավառների երկեր ուսումնասիրել, առավել ևս՝ գիտական-քննական հրապարակումներ անել։ Ուստի անդրդվելի հանգստությամբ սպասում ենք, որ Շ. Ռընուն, Մ. Սթոունը, Մ. Վան Էսբրոքը, Բ. Ութիեն և հայագիտության ուրիշ նվիրյալներ դրսում անեն այն, ինչ առաջինը մենք պետք է անեինք։ Զարմանալիորեն դանդաղում ենք. ինչպես երևում է հայագիտությամբ զբաղվող մեր հաստատությունները կարոտ են հանրապետության մակարդակով անելիքները կարգավորող որևէ օղակի, թեկուզ գիտխորհրդի տեսքով։

5. Վերջին տարիներին նկատվում է վտանգավոր մի միտում՝ զբաղվել այն տարածքով, որ այսօրվա Հայաստանն է ներկայացնում։ Հնագիտության համար դա հասկանալի է, բայց անմեկնելի է, երբ խոսքը վերաբերում է պատմական աշխարհագրությանը, տեղանվանարանությանը, գրչության օջախներին, ճարտարապետության պատմությանը, էթնիկական պատմությանը, մատենագրությանը և այլն։ «Աչքից հեռու՝ սրտից հեռու» սկզբունքը գիտությանը չի վերաբերում, և առհասարակ՝ հայագիտության մեր սերունդը հոգնել է «քաղաքականություն խաղալուց»։ Ղարաբաղի դասերը այդ են ապացուցում։

6. Հայաստանի միջնադարագիտության զարգացումը կասեցնող պարագաների թվում չենք կարող չհիշատակել սկզբնաղբյուրների հրատարակության անբավարար վիճակը։ Միջնադարյան շատ պատմիչների գործեր չունեն գիտական հրատարակություններ (Դրասխանակերտցի, Ուխտանես, Վարդան, Օրբելյան, Մեծոփեցի, Դավրիժեցի և այլք)։ Դարասկզբին կազմված գիտական բնագրերը (Ագաթանգեղոս, Խորենացի, Փարպեցի) այսօր գոհացուցիչ նկատվել չեն կարող, քանի որ չեն ամփոփում առ այսօր հայտնի դարձած բոլոր ընդօրինակությունները ու պատառիկները, չեն կրում հայագիտության վերջին տասնամյակների կատարած ճշգրտումների ու սրբագրությունների կնիքը։ Համալսարանի ձեռնարկած մատենաշարը գիտականության չի հավակնում, եթե չասենք՝ նահանջ է դարասկզբին իսկ եղած մակարդակից։ Եթե մի քիչ խիստ լինենք՝ պատմիչների աշխարհաբար թարգմանությունները հարստացնում են ում ուզեք, բայց ոչ հայագիտությունը։ Յուրաքանչյուր թարգմանության պետք է նախորդի բնագրի գիտական հրատարակությունը, այլապես թյուր մեկնաբանություններն անխուսափելի են։ Այդ վերաբերում է և ռուսերեն թարգմանություններին։

7. Եթե ուզենանք այսօր իսկ վերանայել մեր անելիքները, ցավոք, անկարող պիտի գտնվենք, որովհետև մասնագիտական պատրաստություն ունեցող երիտասարդները միջնադարագիտության մարզում չափազանց քիչ են։ Գոհացուցիչ չէ գրարարի իմացությունը, հարևան երկրների մատենագրության, լեզվի ու պատմության ճանաչումը, բնագրագիտական պատրաստությունը և, ի վերջո, ճշմարիտ նվիրումը։ Տասնամյակներ չենք հոգացել փոխարինողների արժանավոր սերունդ պատրաստելը, քանակային տվյալը շփոթել ենք մասնագիտական կարողության հետ, ուստի «բազում են կոչեցեալք, և սակաւ ընտրեալք»։